ԳԱՆՉՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ

Մեքսիկական հեքիաթ

Կար չկար մի թագավոր կար: Նա մի որդի ուներ, և երբ եկավ նրա ամուսնանալու տարիքը, նա ասաց. «Հայրիկ ուզում եմ ամուսնանալ աշխարհի ամենագեղեցիկ աղջկա հետ: Այսպիսով, գնում եմ ողջ աշխարհով շրջելու, որ գտնեմ նրան: Այս ասելով արքայազնը հեռացավ պալատից: Երկար ճանապարհորդությունից հետո նա կանգ առավ մի շատրվանի մոտ, որ ջուր խմի: Երբ երիտասարդը կռացավ դեպի ջուրը, ջրի հարթ մակերևույթին տեսավ երեք նարնջի պատկեր: Ապա վեր նայելով տեսավ ետևում շքեղ պտուղներով լի նարնջի ծառ:

- Ինչ ախորժելի տեսք ունեն այս մրգերը: Ասելով այս բարձրացավ և ծառից մի քանիսը քաղեց:

Արքայազնը կտրեց դրանցից մեկը մեջտեղից, և հանկարծ միջից մի հիանալի աղջիկ հայտնվեց ասելով «Հաց կտաս ինձ»:

«Չեմ կարող, ախր ես չունեմ»,- ասաց արքայազնը:

«Եթե ոչ, ետ տուր նարինջը»,- ասաց աղջիկը և նարինջը կրկին ամբողջական դարձավ:

Արքայազնը կտրեց երկրորդ նաինջը: Սրա միջից էլ կրկին մի աղջիկ հայտնվեց, այս անգամ նա ավելի գեղեցիկ էր:

«Հաց կտաս ինձ»,- ասաց աղջիկը:

Արքայազնը կրկին ասաց, որ չի կարող, որովհետև նա հաց չունի:

«Այսպիսով, չեմ թողնի ուտես նարինջը»,- ասաց աղջիկը ու նարինջը կրկին ամբողջացավ:

Արքայազնը մտքում կշռադատեց պատահածը և որոշեց մի փոքր հաց հանել, եթե երրորդ նարնջից էլ աղջիկ դուրս գար ու պահանջեր:

Քանի դեռ արքայազնը որոշումներ էր կայացնում ճանապարհով կառքով մի գնչու է անցնում:

Տեսնելով գնչուին արքայազնը կանչեց.

- Բարեկամս, կարող ես ինձ մի կտոր հաց տալ ոսկե դրամի դիմաց:

Գնչուն շտապ իջավ կառքից, որ արքայազնին հաց հասցնի:

Այսպիսով արքայազնը ուրախ ու բավարարված կտրեց երրորդ նարինջը: Կրկին նարնջի միջից մի աղջիկ բարձրացավ, այս մեկը մնացած երկուսից էլ գեղեցիկ էր: Նա նույնպես հաց ուզեց: Արքայազնը ուրախ ու երջանիկ հացը տվեց աղջկան: Վերցնելով հացը նա բացականչեց: «Ես հիմա քոնն եմ: Կարող եմ անել ինչ կամենում ես»:

«Կամենում եմ ամուսնանալ քեզ հետ և քեզ պալատ տանել»,- պատասխանեց արքայազնը:

Բայց աղջիկը ամբողջովին մերկ էր և քանի որ արքայազնը նրան պալատ էր ուզում իր հետ տանել, այդ տեսքով նա չէր կարող:

Նա ուսումնասիրեց գնչուի հագուստները, բայց դրանք շատ կեղտոտ էին: Արքայազնը, այսպիսով աղջկան ասաց. «Մնա գնչուի մոտ, մինչ ես կգնամ ու քեզ համար հագուստներ կգնեմ»:

Գնչուն մի աղջիկ ուներ, ով կառքի մեջ քնած էր և ոչինչ չէր տեսել: Նա արթնացավ հենց այն ժամանակ, երբ արքայազնը հեռանում էր: Աղջիկը մի հայացքից սիրահարվեց արքայազնին:

Գնչուհին իջավ կառքից և հորը հարցրեց, թե ինչ է պատահել: Հայրը պատմեց պատահածի մասին: Գնչուհին տեսավ աղջկան և ասաց. «Թույլ տուր սանրեմ մազերդ, որ ավելի գեղեցիկ լինես երբ արքայազնը գա:

Աղջիկը համաձայնվեց, և երբ գնչուհին սկսեց սանրել մազերը, նա հանկարծ մի փուշ մտցրեց աղջկա գլխի մաշկի մեջ: Անմիջապես գեղեցիկ աղջիկը վերածվեց կարապի: Գնչուհին հանեց հագուստները ու նստեց գեղեցիկ աղջկա տեղը:

Շուտով արքայազնը վերադարձավ և տեսնելով աղջկան հարցրեց: Տիկին ինչու եք այսքան սևացել: «Արևը վառեց իմ մաշկը»,- պատասխանեց կախարդը:

Արքայազնը հավատալով կախարդին գեղեցիկ աղջկա փոխարեն նրա հետ ամուսնացավ:

Մի օր կարապը եկավ թագավորի այգի և հարցրեց այգեպանին, թե ինչպես են արքայազնն ու նրա կինն ապրում:

-Հաճախ նա երգում է, բայց հիմնականում լաց է լինում,- պատասխանում է այգեպանը:

Այդ օրից սկսած կարապը գալիս էր այգի ու ամեն անգամ նույն հարցն էր տալիս: Ի վերջո այգեպանը այդ մասին արքայազնին պատմեց:

Արքայազնը հրամայեց, որ բռնեն թռչնին և իր մոտ բերեն: Հաջորդ անգամ այգեպանը թակարդ պատրաստեց այն ծառի տակ, որտեղ կարապը սիրում էր հանգստանալ: Եվ երբ կարապը ուզում էր թռչել հեռանալ, նա չկարողացավ, այգեպանը բռնել էր նրան: Երբ արքայազնը տեսավ փոքրիկ կարապին, նա սիրահարվեց: Նա վերցնում է նրան իր ձեռքերի մեջ ու շոյում նրա գլուխը: Ջգալով փուշը նրա գլխում, արքայազնը այն հանեց և անմիջապես կարապը վերածվեց այն հեքիաթային աղջկան, որին նարնջի միջից էր հանել:

Գեղեցիկ աղջիկը պատմեց այն ամենը ինչ պատահել էր և արքայազնն էլ այդ պատմությունը թագավորին պատմեց:

Թագավորը լսելով պատմությունը շատ բարկացավ, և հրամայեց գնչու կախարդին այրել կրակի վրա: Այսպիսով, արքայազնն ու գեղեցիկ աղջիկը ամուսնացան և ապրեցին երկար ու երջանիկ:

Թարգմ. Մելինե Ղոնյանը